ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՂԱՎՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

01.09.2012 թ. - 01.09.2013 թ. համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՂԱՎՆԱԶՈՐ 2013թ.

Հարգելի Աղավնաձորցիներ 2012թվականի երկրորդ և 2013թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

2011թ. դեկտեմբերի 14-ին համայնքի ավագանին իր N36-Ն որոշմամբ ընդունել է 2012թվականի բյուջեն,ըստ որի եկամուտները կազմել են 21մլն 569 հազար 200 դրամ,ծախսերը՝ 21մլն 580 հազար 200 դրամ: Պակասորդը կազմել է 6411 հազար 900 դրամ,որը լրացվել է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին: Հողի հարկի չափը Աղավնաձորի վարչական տարածքում գտնվող հողի համար կազմել է 2 մլն 900 հազար դրամ : 2012թ. հողի հարկը հավաքագրվել է 2մլն 902 հազար 900 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 100,7% - ը:

2012թ. գույքային հարկերը հավաքագրվել են 100 %- ով, որը բացարձակ թվով կազմել է 3մլն 401 հազար դրամ:

2012 թվականի դեկտեմբերի 24-ին համայնքի ավագանին իր N 27-Ն որոշմամբ ընդունել է 2013 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 23 մլն 425 հազար 200 դրամ, ծախսերը 23 մլն 445 հազար 600 դրամ:

Հողի հարկը կազմել է 3մլն 050 հազար դրամ, որից առաջին կիսամսյակում հավաքագրվել է 1մլն 132 հազար 500 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 37,1 % - ը,

Գույքային հարկերը կազմել են 3մլն 250 հազար դրամ, որից առաջին կիսամսյակում հավաքագրվել է 1 մլն 835 հազար 600 դրամ, որը կազմում է տարեկան պլանի 56,5 % - ը:

- **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Համայնքապետարանին օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքների խնդրանքը մեծամասամբ բավարարվել է՝ համայնքի անապահով ընտանիքներին տրվել է 1800.0 հազար դրամի օգնություն:

- **ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

Աղավնաձորի միջնակարգ դպրոցի աշակերտներին տրվել է 120.0 հազար դրամի նվերներ և 150.0 հազար դրամի էքսկուրսիայի ծանապարհածախս: Մշակույթի տանը գործում են պարի և երգի, դաշնամուրի, ասեղնագործության խմբակներ,գործում է գրադարանը:

- **ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից Աղավնաձոր համայնքը ստացել է ջրօգտագործման թույլտվություն, որի համար ամեն եռամսյակ մուծվում է 1, 7 հազար դրամ վճար:

➢ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Հսկողություն է իրականացվում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ոգելից խմիչքի վաճառքի և իրացման 4 թույլտվություններ,որոնցից գանձվել են համապատասխան տուրքի գումարները:

➢ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Սկսվել և ընթացքի մեջ են Աղավնաձոր գյուղի գլխավոր հատակագծի կազմման աշխատանքները,որի համար հայտարարված մրցույթի արդյունքում գյուղապետարանը 4 մլն 950 հազար դրամի պայմանագիր է կնքել հաղթած կազմակերպության հետ :

Պետական բյուջեի միջոցներով կառուցվել է մանկապարտեզի շենքը,որը ներքին հարդարման աշխատանքները կատարելուց հետո կսկսի գործել:

➢ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2012թ. հուլիսի 20-ին և սեպտեմբերի 26-ին կայացել են Աղավնաձոր համայնքի սեփականություն համարվող հողերի աճուրդներ, որոնց արդյունքում օտարվել են 0,70 հա արտադրական և 0,1 հա գյուղատնտեսական նշանակության հողեր: Աճուրդների արդյունքում համայնքի բյուջե է մուտք եղել 5 մլն 213 հազար դրամ: